


ԲԱՐՈՅԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ, ԱՐՈՒԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ

ԺԹ. ՏԱՐԻ 1905

*Տարեկան 10 ֆր. ոսկի = 4 րբ.:*
*Վեցամսեայ՝ 6 ֆր. ոսկի — 2 րբ. 50 կ.:*
*Մէկ թիւ կ'արժէ 1 ֆր. — 50 կ.:*

ԹԻՒ 2 ՓԵՏՐՈՒԱՐ

2141

ԱՌՄԱՌՄՆԵՎԷՆ

—

## ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

## ՄԼՔԷ ԹԱԳՈՒՀՒՈՅՆ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ԶԱՐԴԱՆԿԱՐՆԵՐԸ

*Հազարամեակ մը ունեցանք անցեալ Մլքէ Թագուհւոյն անուանի Աւետարանին գրուած օրէն: Այս հազարամեայ տարեդարձին առթիւ՝ անմահանուն Հ. Ալիշան գեղեցիկ գաղափարն ունեցած էր՝ այս Թագուհւոյն գծուած նամբուրեայ եւ նամբուրեցի մատեանն՝ եթէ ոչ ամբողջովին, գոնէ անոր զարդանկարները նմանահանութեամբ հրատարակելով. որով թէ ազգայնոց եւ թէ օտարաց ալ նմոյշ մի կամ՝ ճաշակ մը տուած կ'ըլլար հին հայկական նկարչութեան կամ՝ գեղարուեստին: Դժբախտաբար անոր մահը Հ. Ալիշանի փափաքին իրագործուելուն չսպասեց, ընդհատեց հազիւ սկսուած գործը. բայց Հ. Ալիշանի իղձն անկատար չմնաց, անոր աշակերտ մին՝ Մեծ. Հ. Մ. Պոտուրեան հազիւ սկսուած ու կիսատ մնացած գործն ի գլուխ հանեց: Ահա այս գեղարուեստական գործին վրայ է՝ որ Արքունի խորհրդական Պրոֆ. Ստրժիգովսկի — քաջածանօթ մեզի իր հայկական ճարտարապետութեան եւ գեղարուեստի մասին գրուածներով եւ մանաւանդ "Էջմիածնի Աւետարանով" — յաջորդ մասնագիտական յօդուածս գրած է յատկապէս "Հանդէսի" համար, զոր կը ներկայացընենք մեր ընթերցողներուն:*

digitised by A.R.A.R.@